

**Դավիթ Թումասյան**

*Ի.գ.թ., դոցենտ, ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի դասախոս,  
ՀՀ արդարադատության ակադեմիայի դասընթացավար*

**ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ՛**

**Համառոտագիր**

Հաշվի առնելով, որ 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական նոր օրենսգրքով «բռնություն» հասկացությունը նախատեսվեց նոր մեկնաբանությամբ՝ քրեական իրավունքի տեսության և դատաքննչական պրակտիկայում անհրաժեշտություն առաջացավ դիտարկել այս հասկացության բովանդակությունն ու դրա կիրառելիությունը ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածների առնչությամբ: Այս հարցն առավել կարևորվեց՝ ելնելով ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածում ամրագրված «բռնություն» հասկացության նոր մեկնաբանության և ՀՀ վճռաբեկ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 1-ի Արևիկ և Ծովինար Սահակյանների վերաբերյալ թիվ ԱԲԳ/0176/01/11 քրեական գործով որոշմամբ նախկինում տրված ձևակերպման տարբերություններով՝ առավել ևս, որ պրակտիկան արդեն իսկ ընդունել էր ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը և լայնորեն կիրառում էր այն: Այս համատեքստում կատարված համակողմանի վերլուծության արդյունքում, իրացնելով ուսումնասիրության նպատակները, ներկայացվեցին ինչպես օրենսդրական, այնպես էլ կիրառական բնույթի առաջարկություններ: Այն, որ բռնություն է համարվում այն արարքը, որը սահմանվել է ՀՀ քրեական նոր օրենսգրքի 3-րդ հոդվածով, անվիճելի է, սակայն այդ ձևակերպումն ամբողջությամբ չի լուծում ՀՀ քրեական օրենսգրքի առջև դրված խնդիրները և չի բավարարում ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի առանձին հոդվածների պահանջներին: Հետևաբար, ներկայացված առաջարկությունների հիման վրա հնարավոր կլինի ոչ միայն հստակեցնել վերլուծված հասկացությունների միջև առաջացող որոշակի խառնաշփոթը, այլ նաև ներկայացված մեկնաբանությունները գործնականում կիրառելով՝ ձևավորել դատաքննչական այնպիսի պրակտիկա, որը կհամապատասխանի օրենսդրական կարգավորումներին և համահունչ կլինի իրավունքի սկզբունքներին:

<sup>1</sup> Հոդվածը ներկայացվել է 13.12.2023 թ., գրախոսվել է 02.04.2024 թ.:

Հողվածը վերաբերում է թե՛ գործնական, թե՛ տեսական կարևոր նշանակություն ունեցող խնդրին, ինչից ելնելով կարող է օգտակար լինել թե՛ տեսաբանների և թե՛ պրակտիկ աշխատողների համար: Ներկայացված մեկնաբանությունները կարող են արդյունավետ լինել նաև ՀՀ վճռաբեկ դատարանի հետագա որոշումների ձևակերպման, ինչպես նաև օրինաստեղծ գործունեություն իրականացնող մասնագետների համար:

**Հիմնաբառեր** - բռնություն, ֆիզիկական ներգործություն, ֆիզիկական բռնություն, բռնության սպառնալիք, հարվածներ, ծեծ, ֆիզիկական վնաս:

### **Ներածություն**

2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական նոր օրենսգիրքն էապես փոխեց քրեաիրավական կարգավորումները և նախատեսեց բազմաթիվ սահմանումներ, որոնք միտված են ՀՀ քրեական օրենսդրության կիրառման միատեսակության ապահովմանը, նույն սահմանումների և եզրույթների նույն բովանդակությամբ մեկնաբանմանը, տարընթերցումների և տեսական վեճերի վերացմանը, ինչպես նաև դատական պրակտիկայի և օրենսդրության համահունչության ապահովմանը: Այդ նպատակները հիմնականում իրացվել են, սակայն որոշ հասկացությունների առնչությամբ առաջացել են նոր տեսական վեճեր և կիրառման բարդություններ: Մասնավորապես, ՀՀ քրեական նոր օրենսգրքի 3-րդ հոդվածը, ի թիվս այլ սահմանումների, նախատեսել է նաև «բռնություն» սահմանումը՝ տալով այս երևույթի ուրույն, սակայն վիճելի մեկնաբանություն:

Այն, որ բռնությունը գոյություն ունի մարդկության գոյության ամբողջ ընթացքում և այն իսպառ վերացնել անհնարին է, անհերքելի է: Ավելին, այն, ունենալով տարաբնույթ դրսևորումներ և իրականացվելով տարբեր նպատակներով, կիրառվում է տարբեր ոլորտներում, տարբեր մակարդակներում և ունենում է տարբեր հետևանքներ: Այս ամենը հանգեցրել է նրան, որ բռնությունն ունի տարբեր սահմանումներ և տարբեր մեկնաբանություններ: Հաշվի առնելով, որ միասնական մոտեցում իրավակիրառ պրակտիկայում և տեսությունում տասնամյակներ շարունակ չկար՝ բարդ էր ներկայացնել համապարփակ այնպիսի մոտեցում, որը հնարավորինս կներառեր բռնության բոլոր դրսևորումները: Սակայն ՀՀ վճռաբեկ դատարանը հանցավոր բռնության առնչությամբ ձևակերպեց համապատասխան սահմանումը 2012 թվականի նոյեմբերի 1-ի Արևիկ և Ծովինար Սահակյանների վերաբերյալ թիվ ԱԲԳ/0176/01/11 քրեական գործով որոշմամբ (այսուհետ՝ նախադեպային որոշում), որով կարգավորեց իրավակիրառ պրակտիկան:

Հաշվի առնելով, որ ՀՀ քրեական նոր օրենսգրքի 3-րդ հոդվածով նախատեսված սահմանումը և նախադեպային որոշմամբ առաջարկված ձևակերպումը

բովանդակում են տարբերություններ՝ գիտագործնական տեսանկյունից անհրաժեշտություն առաջացավ համապարփակ ուսումնասիրել «բռնությունը» քրեաիրավական հարաբերությունների համատեքստում, ինչից ելնելով և ձևակերպվեց ուսումնասիրության թեման՝ «Բռնությունը Հայաստանի Հանրապետության քրեական նոր օրենսգրքի կարգավորումների լույսի ներքո»:

Ելնելով վերոգրյալից՝ ուսումնասիրության նպատակն է օրենսդրական, տեսական, գործնական մակարդակներով ուսումնասիրել «բռնություն» հասկացության մեկնաբանությունը՝ ՀՀ քրեական նոր օրենսգրքի լույսի ներքո և նախանշել այդ հասկացության կիրառման առնչությամբ հնարավոր խոչընդոտները և թյուրընկալումները: Այս նպատակին համահունչ ուսումնասիրմամբ բարձրացվել են հիմնահարցեր, որոնք հնարավորություն կընձեռեն լուծել հետևյալ խնդիրները՝

1. որքանով է կիրառելի ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը ՀՀ քրեական նոր օրենսգրքով սահմանված եզրույթների շրջանակներում,
2. որքանով է ՀՀ քրեական նոր օրենսգրքով սահմանված «բռնություն» հասկացությունը կիրառելի ՀՀ քրեական նոր օրենսգրքի Հատուկ մասի հոդվածների համատեքստում,
3. արդյո՞ք առկա է «բռնություն» հասկացության փոփոխության անհրաժեշտություն և ինչպես է հնարավոր այն ձևակերպել տարընթերցումներից խուսափելու համար:

Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքն են կազմել ձևական-տրամաբանական, պատմաիրավական, համեմատական-իրավական և վերլուծական մեթոդները, որոնց կիրառումը հնարավորություն ընձեռեց ոչ միայն լուծել առաջադրված խնդիրները, այլ նաև բազմակողմանի ներկայացնելով ուսումնասիրության առարկան՝ ներկայացնել համապատասխան առաջարկություններ:

### **1. «Բռնություն» հասկացությունը**

«Բռնություն» հասկացությունը թվացյալ այն պարզ եզրույթներից է, որի բնորոշումը ենթադրաբար չպետք է բարդություն ներկայացնեն, քանի որ այս երևույթի հետ առնչվում են բոլորը և ցանկացած տարիքում: Զննարկվող եզրույթի կենցաղային կիրառումն ու մեկնաբանությունը մասնագիտական գրականությունում էապես տարբերվում է, ինչից ելնելով՝ դատաքննչական և տեսական մակարդակներում մշտապես առաջացել և առաջանում են վեճեր ինչպես եզրույթի հասկացության, այնպես էլ դրա առանձին հատկանիշների վերաբերյալ:

Համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից տրված սահմանման՝ բռնությունը ֆիզիկական ուժի կամ իշխանության (լիազորության, դիրքի) նպատակադրված կիրառումն է կամ դրա սպառնալիքը մեկ այլ անձի, խմբի կամ համայնքի նկատմամբ, որը մեծ հավանականությամբ հանգեցնում է կամ կարող է հանգեցնել վնասվածքի, գրկանքի, մահվան,

հոգեբանական վնասի կամ զարգացման խանգարումների<sup>2</sup>: Նման ընդհանրական մեկնաբանությունը հնարավորություն տվեց միջազգային փաստաթղթերում առավելագույնս լայն ընկալել «բռնություն» հասկացությունը, սակայն այն կիրառելի չէր քրեաիրավական ոլորտում՝ ելնելով որոշ գնահատողական այն հասկացությունների լայն իմաստով ընկալումից, որոնք ներառված էին քննարկվող եզրույթում:

Նույն Առողջության համաշխարհային կազմակերպությունն առավել ընդլայնված նկարագրեց երեխայի նկատմամբ բռնությունը: Այսպես, Երեխաների նկատմամբ բռնության կանխարգելման խորհուրդը, գիտակցելով երեխայի նկատմամբ բռնության առանձնահատկությունները և «բռնության» հասկացության կիրառման անհնարինությունը երեխաների նկատմամբ, 1999 թվականին հանրությանը ներկայացրեց երեխայի նկատմամբ բռնության հետևյալ սահմանումը. «Երեխաների նկատմամբ բռնությունը նշանակում է երեխայի առողջության, կյանքի, զարգացման, ինքնության իրական կամ պոտենցիալ վտանգմանը հասցնող ֆիզիկական կամ հուզական դաժանություն, սեռական բնույթի գործողություններ կամ անտեսում կամ բարձիթողություն՝ օգտվելով կարգավիճակից կամ պաշտոնից բխող լիազորություններից կամ չարաշահելով երեխայի վստահությունը»<sup>3</sup>: Այստեղ ուշադրությունը չի կենտրոնացվում բռնության դիտավորյալ բնույթի վրա, այն դեպքում, երբ իրավաբանական գրականության մեջ դիտավորությունը հանդիսանում է բռնության պարտադիր պայմաններից մեկը: Այսպես, երեխայի նկատմամբ բռնությունն ասելով՝ հասկանում ենք ուժի կամ իշխանության դիտավորյալ գործադրում՝ սպառնալիքի կամ գործողության միջոցով, որն իրական կամ պոտենցիալ վնաս է հասցնում երեխայի առողջությանը, գոյատևմանը, զարգացմանը կամ արժանապատվությանը՝ որպես գործողության անմիջական կամ հնարավոր հետևանք: Այս ձևակերպմամբ փաստացի ընդլայնվեց երեխաների նկատմամբ բռնությունը՝ այն չսահմանափակելով այն դրսևորումներով, որոնք համարվում են բռնություն չափահասների համար, ինչն արդարացված է և պայմանավորված է երեխայի տարիքային և հոգեբանական առանձնահատկություններով:

ՀՀ ազգային օրենսդրությամբ «բռնություն» և «երեխայի նկատմամբ բռնություն» հասկացությունները երկար ժամանակ նախատեսված չեն եղել, սակայն լայնորեն կիրառվել են պրակտիկայում:

<sup>2</sup> Sten World report on violence and health/ Edited by Etienne G. Krug, WHO, 2002, p. 5, <http://whqlibdoc.who.int/hq/2002/9241545615.pdf> (մուտք 13.11.2023 թ.):

<sup>3</sup> Sten նույն տեղում, էջեր 5-6: Այս համատեքստում, ըստ բռնության գործադրման կանխամտածվածության աստիճանի, առանձնացնում են կանխամտածված և պատահական բռնությունը: Կանխամտածված բռնությունը ֆիզիկական ուժի կամ իշխանության (դիրքի չարաշահման) նպատակադրված՝ գործածումն է այլ անձի, խմբի կամ համայնքի նկատմամբ, ինչը հանգեցնում է վերոնշյալների վնասմանը, մահվանը, հոգեբանական վնասմանը, զարգացման խանգարմանը կամ զրկանքի: Պատահական բռնության դեպքում բռնություն գործադրողն ի սկզբանե չի ունենում տուժածին վնասելու ցանկություն:

«Բռնություն» հասկացությունը երկար տարիներ մեկնաբանվում էր հիմք ընդունելով նախադեպային որոշմամբ չ՛չ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը, որի համաձայն՝ բռնությունը՝ որպես քրեորեն հետապնդելի արարք, դիտավորությամբ, անձի կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու կատարված ցանկացած արարք է, որի արդյունքում անձը զրկվել է կյանքից, կամ սահմանափակվել է նրա ազատությունը, կամ նրա առողջությանը վնաս է պատճառվել, կամ նրան պատճառվել է ֆիզիկական ցավ, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք<sup>4</sup> :

2021 թվականի մայիսի 5-ին ընդունված չ՛չ քրեական նոր օրենսգիրքը 3-րդ հոդվածում ներկայացրեց օրենսգրքում օգտագործվող հիմնական հասկացությունները, որոնց թվում էր նաև «բռնություն» հասկացությունը:

Ի տարբերություն դրա՝ «երեխայի նկատմամբ բռնություն» հասկացությունը չ՛չ օրենսդրության մեջ առ այսօր ամրագրված չէ, այն միայն նախատեսվել է «Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» օրենքի նախագծում: Այդ նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ երեխայի նկատմամբ բռնություն է համարվում երեխայի նկատմամբ ֆիզիկական, սեռական, տնտեսական կամ հոգեբանական բռնության ցանկացած ձևը, չարաշահումը կամ անտեսումը<sup>5</sup>: Հաշվի առնելով, որ նոր օրենքի նախագծում ներկայացված «երեխայի նկատմամբ բռնություն» հասկացությունը հիմնականում կիրառվելու է երեխաների պաշտպանության և սոցիալական աջակցության համատեքստում և ոչ քրեաիրավական հարաբերությունների առնչությամբ, սույն հոդվածում այն չի ենթարկվելու ուսումնասիրության:

## 2. Բռնությունը քրեական իրավունքի տեսության մեջ

Ինչպես չ՛չ օրենսդրությունը, այնպես էլ քրեական իրավունքի տեսությունը չունի միատեսակ մոտեցում «բռնություն» հասկացության վերաբերյալ, և հեղինակների մեծամասնությունը մեկնաբանում են այն՝ շեշտադրելով այն հատկանիշները, որոնք նրանք կարևորում են, և ելնելով կոնկրետ նպատակներից, որոնց հասնելու համար նրանք մեկնաբանում են «բռնություն» հասկացությունը:

Բռնությունը սահմանվում է որպես հասարակության քաղաքական, սոցիալական, տնտեսական կազմակերպման տարր<sup>6</sup>: Համաշխարհային հանրությունը ձգտում է գտնել և նկարագրել մարդու վարքի մի ձև, որն իր մեջ կրում է կործանարար ուժի բովանդակությունը՝ չարն ու չարիքը: 20-րդ դարում

<sup>4</sup> Չ՛չ վճռաբեկ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 1-ի Ա. և Ծ. Սահակյանների վերաբերյալ թիվ ԱՐԴ/0176/01/11 քրեական գործով որոշում, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=80785> (մուտք 13.11.2023 թ.):

<sup>5</sup> Տե՛ս, <https://www.e-draft.am/projects/5592/about> (մուտք 13.11.2023 թ.):

<sup>6</sup> Տե՛ս Тевлюкова О. Ю., Насилие как феномен социальной организации: опыт теоретико-методологического анализа. Диссертация на соискание канд. социолог. наук. Новосибирск, 2005, С. 13:

«բռնության» քրեական իրավունքի կատեգորիայի սահմանները սկսեցին որոշել «բռնության» սոցիոլոգիական մեկնաբանման համատեքստում, ինչն անդրադարձավ այդ հասկացության բովանդակության վրա: Հետևաբար, «բռնություն» հասկացությունը պետք է ներկայացվի և ներկայացվում է «բռնության» տարբեր ասպեկտները նկարագրելու համար՝ սոցիոլոգիական, քրեաիրավական, քրեաբանական, հոգեբանական, մարդաբանական (անտրոպոլոգիական) և այլն:

Համապարփակ էր Ս. Վ. Առաքելյանի կողմից ներկայացվող հասկացությունը, որի կարծիքով՝ «բռնությունը բխում է հասարակության, ավելի ճիշտ՝ մարդու սոցիալական բնույթից, նրա անձը բնութագրող այնպիսի սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններից, որոնց ազդեցության տակ նա միշտ ընդունակ է և գերադասում է լուծել իր առջև ծառայած խնդիրները արգելված (այդ թվում՝ բռնության կիրառման) եղանակներով ու միջոցներով»<sup>7</sup>:

Սակայն այս հասկացությունն առավել քրեաբանական է, քան քրեաիրավական: Քրեաիրավական հարաբերությունների համատեքստում բռնությունը ներկայացվում է որպես արարք, որն իրականացվում է անձի նկատմամբ: Այսպես, Ա. Ա. Պիոնտկովսկին դեռ անցյալ դարում նշում էր, որ քրեական իրավունքի տեսության մեջ «անձի նկատմամբ բռնությունը կայանում է նրան իր ցանկություններին հակասող գործողություններ կատարելուն ուղղված ցանկացած հարկադրանքի մեջ»<sup>8</sup>: Եթե հիմնվենք բռնության մասին քրեաիրավական ուսմունքի վրա, ապա պետք է բռնությունը դիտարկել անձի նկատմամբ կիրառման համատեքստում, քանի որ այն կիրառվում է միայն անձի դեմ՝ այս կամ այն կոնկրետ հանցագործությունը կատարելիս:

Իր հերթին, ուսումնասիրելով կենցաղային բռնի հանցագործությունների բնույթը, Օ. Վ. Ստարկովը շեշտադրել էր բռնության այնպիսի պարտադիր հատկանիշ, ինչպիսին կամարտահայտության ազատության սահմանափակումն է՝ նշելով, որ ֆիզիկական և հոգեբանական բռնության համար պարտադիր հատկանիշ է կամարտահայտության ազատության պարտադիր սահմանափակումը: Ընդ որում, «բռնություն» հասկացությունը, ըստ նրա, ներառում էր ոչ միայն վնաս պատճառելը, այլ նաև այն պատճառելու հնարավորությունը: Ըստ Օ. Վ. Ստարկովի՝ «բռնությունն իրական կամ հավանական ֆիզիկական վնասի պատճառումն է, որը հասկացվում է որպես մարդու անատոմիաֆիզիոլոգիական ամբողջականության խախտում»<sup>9</sup>:

Որոշ հեղինակներ, իրենց հերթին դիտարկելով բռնությունը որպես մարդու առողջությանը և նրա ֆիզիկական կամ անձնական անձեռնմխելիությանն

<sup>7</sup> Տե՛ս Առաքելյան Ս. Վ., Կանանց իրավական պաշտպանությունը բռնությունից, Երևան, 2001 թ., էջ 8:

<sup>8</sup> Տե՛ս Пионтковский А. А., Преступления против личности. М., 1938, С. 161:

<sup>9</sup> Տե՛ս Старков О. В., Бытовые насильственные преступления (причинность, групповая профилактика, наказание). Рязань, 1992, с. 34:

իրական վնասի պատճառում<sup>10</sup>, բռնությունն ինքնին նույնացնում էին դրա արդյունքում առաջացող հետևանքների հետ: Այսպես, Ռ. Ա. Բազարովը, ներկայացնելով բռնության հասկացությունը, շեշտը դնում էր դրա դիտավորյալ բնույթի և այն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կիրառելու հնարավորության վրա: Այսպես, նա նշում է, որ «բռնությունը ֆիզիկական ուժի (անձի մկանային ուժի կամ որևէ զենքի, այլ առարկաների կամ նյութերի օգնությամբ, հոգեպես հիվանդ<sup>11</sup> մարդկանց, մանկահասակների կամ կենդանիների միջոցով) դիտավորյալ կիրառումն է ուրիշի նկատմամբ և ուղղված է անձի ֆիզիկական անձեռնմխելիությունը խախտելուն, առողջությանը կամ կյանքին վնաս պատճառելուն»<sup>12</sup>: Մինչ այդ Լ. Դ. Գաուխմանը քրեական իրավունքում արդեն առանձնացրել էր բռնության փաստական և իրավաբանական հատկանիշները: Նա փաստական հատկանիշների շարքն էր դասում օբյեկտիվ այն հատկանիշները, որոնք բնութագրում են արարքի արտաքին կողմն ու հատկապես հանցագործության եղանակը, ինչպես նաև սուբյեկտիվ հատկանիշները, որոնք բնութագրում են բռնություն կիրառող անձի և տուժողի կամային վերաբերմունքը արարքի նկատմամբ: Որպես իրավաբանական հատկանիշներ, ըստ նրա, հանդես էին գալիս «հակաիրավականությունը» և «արարքի հանրային վտանգավորությունը»<sup>13</sup>:

Մասնագիտական գրականության մեջ բռնությունը բնորոշելիս այլ հատկանիշների հետ միաժամանակ կարևորվում էր նաև մարդու ազատության կամ անձեռնմխելիության բռնի սահմանափակումը կամ առհասարակ դրանցից զրկումը: Այսպես, Լ. Վ. Սերդյուկը հատկապես շեշտադրում էր, որ «բռնությունն այլ մարդու կամ մարդկանց կողմից արտաքին, մեղավոր և հանրորեն վտանգավոր ներգործությունն է այլ մարդու կամ մարդկանց խմբի նկատմամբ, որն իրականացվում է նրա կամ նրանց կամքին հակառակ կամ նրա կամ նրանց կամքն անտեսելով և ընդունակ է նրան կամ նրանց հասցնել օրգանական, ֆիզիոլոգիական կամ հոգեկան վնաս կամ սահմանափակել նրա կամ նրանց կամարտահայտությունը կամ գործողություններ կատարելու ազատությունը»<sup>14</sup>:

Բռնության բավականին համակողմանի բնորոշում էր տվել Ռ. Դ. Սաբիրովը՝ նշելով, որ այն հանդիսանում է մեկ այլ մարդու նկատմամբ դիտավորյալ ներգործություն մարդկանց կամ կենդանիների ֆիզիկական ուժի օգտագործմամբ, ինչպես նաև տեխնիկական միջոցների, նյութական աշխարհի ազդող

<sup>10</sup> Ст'у Землюков С. В., Уголовно-правовые проблемы преступного вреда. Новосибирск, 1991, с. 125:  
<sup>11</sup> Կիրառվում է հեղինակի կողմից նշված եզրույթը, որն ըստ միջազգայնորեն ընդունված սահմանումների՝ համարվում է խտրական և պիտակավորող, ինչից ելնելով՝ այն ցանկալի չէ կիրառել մասնագիտական գրականությունում:  
<sup>12</sup> Ст'у Базаров Р. А., Уголовно-правовая характеристика насилия// Проблемы обеспечения личной безопасности граждан: Труды Академии МВД России. М., 1995, с. 42-43:  
<sup>13</sup> Ст'у Гаухман Л. Д., Борьба с насильственными посягательствами. М., Юридическая литература, 1969, с. 4:  
<sup>14</sup> Ст'у Сердюк Л. В., Психическое насилие как предмет уголовно-правовой оценки. Диссертация на соискание канд. юрид. наук. М., 1979, с. 2:

գործոնների և հատկանիշների կամ բնության տարբեր երևույթների միջոցով առանց հաշվի առնելու նման ներգործության ենթարկվողի կամքը կամ նրա կամքին հակառակ, վերջինիս ֆիզիկական անձեռնմխելիությունը, անատոմիական ամբողջականությունը կամ որևէ օրգանի նորմալ գործունեությունը խախտելու համար կամ նման գործողություններ կատարելու սպառնալիքը<sup>15</sup>:

Մի քանի տարի անց Ֆ. Մ. Ջավադովն առավել պարզեցրել էր նշված սահմանումը և նրա կարծիքով՝ «բռնությունը հանրորեն վտանգավոր հակաիրավական դիտավորյալ ազդեցությունն է մարդու օրգանիզմի վրա, որն իրականացվում է նրա կամքին հակառակ կամ կամքն անտեսելով և ուղղված է կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելուն»<sup>16</sup>: Նման սահմանում ներկայացնելով՝ Ֆ.Մ. Ջավադովը բռնությունը փոխկապակցեց պարտադիր հետևանքների առաջացման հետ, ինչն այդքան էլ ճիշտ և արդարացված չէր:

21-րդ դարում վերանայվեց նաև «բռնություն» հասկացությունը՝ փոփոխելով այն բնութագրող հատկանիշները, չնայած հիմնական հատկանիշները մնացին անփոփոխ: Այսպես, Վ. Վ. Իվանովան բռնությունը սահմանում էր որպես հանրորեն վտանգավոր, հակաիրավական հոգեկան կամ ֆիզիկական ազդեցություն ուրիշ մարդու նկատմամբ, որը կատարվում է նրա կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու, և որն իրենից ներկայացնում է վտանգ կյանքի կամ առողջության համար կիրառման պահին, կամ ազատությունից զրկում, և որի հետևանքով կարող է վրա հասնել տարբեր աստիճանի ծանրության առողջության վնասի պատճառում կամ մահ<sup>17</sup>: Այս սահմանման հիմնական թերությունը կրկին հանդիսանում է բռնության՝ հետևանքի հետ պարտադիր փոխկապակցվածությունը:

Բոլոր դեպքերում, բոլոր սահմանումներում նշվում էր բռնության այնպիսի պարտադիր հատկանիշ, ինչպիսին գործողությունների կատարումն է «հակառակ տուժողի կամքին», «առանց տուժողի կամքը հաշվի առնելու կամ կամքն անտեսելով»: «Հակառակ» և «առանց հաշվի առնելու կամ անտեսելու» բառերն ընդգրկում են այն իրավիճակները, երբ տուժողը գիտակցում է, որ իր նկատմամբ կատարվում է բռնություն և դրան դեմ է արտահայտվում, բայց իր կարծիքն անտեսվում է, և այն իրավիճակները, երբ տուժողը չէր կարող գիտակցել բռնության փաստը, և նրա կարծիքն առհասարակ հաշվի չի առնվում, շրջանցվում է:

Թեև բռնության տարբեր հասկացություններ ներառում են հանցավոր բռնության տարբեր հատկանիշներ, դրանք բոլորն էլ առանձնացնում են մեկ ընդհանուր հատկանիշ, այն է՝ ուրիշի վրա հոգեբանական կամ ֆիզիկական

<sup>15</sup> Ст'ю Сабиров Р. Д., Уголовно-правовая борьба с насильственными посягательствами. Свердловск, 1981, с. 27, 29, 38:

<sup>16</sup> Ст'ю Джавадов Ф. М., Квалификация насильственных преступлений, совершенных с применением оружия: Автореферат дис. канд юрид. наук. М., 1985, с. 11:

<sup>17</sup> Ст'ю Иванова В. В., Преступное насилие. Учебное пособие для вузов. М.: ЮИ МВД РФ, Книжный мир, 2002, с. 22:



ներգործությունը: Ընդ որում, ուժի կիրառումն անշունչ առարկաների (մասնավորապես՝ գույքի, գենքի, ավտոմեքենայի կամ այլ առարկաների), կենդանիների, կազմակերպության՝ որպես իրավաբանական անձի, և վերջապես սեփական անձի նկատմամբ չի ներառվում բռնության հասկացության մեջ: Այսինքն՝ բռնության ներգործության առարկա կարող է հանդիսանալ միայն մարդը, այն էլ, եթե նա բռնությունը գործադրում է այլ մարդու նկատմամբ, ոչ՝ իր:

«Բռնություն» հասկացության քրեաիրավական առավել ամբողջական ձևակերպում էր ներկայացրել Դ. Ռ. Հունանյանը, ում կողմից առաջարկված հասկացությունը հիմք էր հանդիսացել նախադեպային որոշմամբ կիրառվող հասկացությունը ձևակերպելու համար: Ինչպես նշում էր Դ. Ռ. Հունանյանը, բռնության հասկացության սահմանումը լիովին հնարավոր է, և դրա առկայությունը քրեական օրենսդրությունում հանդիսանում է ինչպես գիտական, այնպես էլ գործնական անհրաժեշտություն: Դ. Ռ. Հունանյանի կարծիքով՝ բռնությունն առկա է այնտեղ և այն ժամանակ, երբ առկա է շահերի բախում: Կախված նրանից, թե ինչպիսի շահի իրականացմանն է ուղղված բռնությունը, այն կարող է գնահատվել դրական կամ բացասական<sup>18</sup>: Հանցավոր բռնությունը մարդու, հասարակության կամ պետության անվտանգության սպառնալիք է, միաժամանակ, իրավաչափ բռնությունը նշված սուբյեկտների անվտանգության սպառնալիքն է: Այսինքն՝ մարդու, հասարակության, պետության իրավաբանական անվտանգությունն սպառնվում է նաև բռնության կիրառմամբ: Բնականաբար, հնարավոր են մարդու, հասարակության, պետության անվտանգության սպառնալիքն այնպիսի եղանակներ, որոնց դեպքում դարձյալ կիրառվում է բռնություն: Դ. Ռ. Հունանյանը հանցավոր բռնությունը սահմանում էր հետևյալ կերպ. «Բռնություն է հանդիսանում դիտավորյալմբ և ուրիշի կամքին հակառակ կամ առանց ուրիշի կամքը հաշվի առնելու կատարված գործողությունը, որն ապօրինի ուրիշին գրկել է կյանքից, կամ սահմանափակել է ուրիշի ազատությունը, կամ ուրիշի առողջությանը պատճառել է վնաս, կամ ուրիշին պատճառել է ֆիզիկական ցավ, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք և կիրառվել է հանցագործություն կատարելու նպատակով»<sup>19</sup>: Այս հասկացության մեջ փոփոխելով որոշակի հատկանիշներ և ձևակերպումներ՝ հնարավոր է ստանալ 2012 թվականի նոյեմբերի 1-ի Արևիկ և Ծովինար Սահակյանների վերաբերյալ թիվ ԱԲԳ/0176/01/11 քրեական գործով որոշմամբ ձևակերպված «բռնություն» հասկացությունը<sup>20</sup>:

Սակայն «բռնության» բովանդակությունն ամբողջ հասարակության կողմից ճիշտ ընկալելու համար անհրաժեշտ է նախևառաջ ֆիքսել, որ բռնությունը և հանցագործությունը տարբեր եզրույթներ են: Բռնությունը կարող է հանդիսանալ

<sup>18</sup> Տե՛ս Հունանյան Դ. Ռ., Բռնությունը քրեական իրավունքի մեջ: Իրավ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2010 թ., էջ 37:

<sup>19</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 177:

<sup>20</sup> Տե՛ս Иванцова Н. В., Объективные признаки уголовно наказуемого насилия// Сборник научных трудов. М., 2001, N2, с. 96:

հանցագործություն միայն այն դեպքում, երբ ամրագրված է ՀՀ քրեական օրենսգրքում, սակայն ամեն մի հանցագործություն չէ, որ իրականացվում է բռնությամբ: «Բռնության» և «հանցագործության» գաղափարը չպետք է հավասարեցվի<sup>21</sup>: Այն, որ բռնությունն ինքնուրույն հանցագործություն չէ, փաստ է, սակայն այն կարող է ունենալ հանցավոր դրսևորումներ կամ կարող է հանդես գալ որպես տարբեր հանցագործությունների կատարման եղանակ կամ միջոց:

Նախադեպային որոշմամբ՝ «բռնություն» հասկացությունը բացառապես ներկայացնում է հոգեբանական կամ ֆիզիկական բռնությունը: Ավելին, Վճռաբեկ դատարանը նույն որոշման 26-րդ կետում ամրագրում է, որ առանց ֆիզիկական ցավի մեկ հարվածը որպես այլ բռնի գործողություններ որակելը ճիշտ չէ, քանի որ օբյեկտիվ կողմի տեսանկյունից՝ հարված հասցնելը և այլ բռնի գործողությունները իրարից տարբերվում են, և այդ եզրույթները նույնացնելու ինչպես լեզվաբացատրական, այնպես էլ քրեաիրավական հիմքեր չկան: Այսպիսով, Վճռաբեկ դատարանը հանգում է հետևության, որ ծեծը<sup>22</sup> ենթադրում է տուժողի մարմնին մեկից ավելի հարվածներ հասցնելը<sup>23</sup>: Քանի որ քննարկվող նախադեպով ՀՀ վճռաբեկ դատարանը մեկնաբանել է ՀՀ քրեական նախկին օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված ծեծ հանցակազմը, ապա մեկնաբանությունները միանշանակ ընդունելի և կիրառելի են: Սակայն, եթե քննարկվում է «բռնություն» հասկացությունը, չփոխկապակցելով այն հանցագործության հետ, այլ դիտարկելով որպես այլ հանցագործության կատարման եղանակ կամ միջոց, ապա այս հասկացությունն ընդունելի չէ, քանի որ մեկ հարվածը նույնպես կարող է հանդիսանալ տարբեր հանցագործությունների կատարման եղանակ կամ միջոց:

Ավելին, ՀՀ վճռաբեկ դատարանը նշում է «ցավ»-ի մասին, որը ՀՀ քրեական նոր օրենսգրքի համատեքստում որևէ կերպ նշված չէ, և հետևաբար ցավի առկայությունը կամ բացակայությունը չի կարող մեկնաբանվել որպես բռնությունը բնութագրող հատկանիշ:

Վերը նշված մոտեցումը խիստ կարևորվում է ՀՀ քրեական նոր օրենսգրքի Հատուկ մասի տարբեր հոդվածները մեկնաբանելիս, քանի որ բազմաթիվ են դեպքերը, երբ ոչ միայն որպես հանցագործության կատարման եղանակ կամ միջոց, այլ նաև որպես ծանրացնող կամ առավել ծանրացնող հանգամանք նշվում է «բռնություն գործադրելը» կամ «բռնություն գործադրելու սպառնալիքը»: Հետևաբար, սահմանելով «բռնություն» հասկացությունը ՀՀ քրեական նոր օրենսգրքում, անհրաժեշտ է դիտարկել ՀՀ քրեական նոր օրենսգրքի Հատուկ մասի տարբեր հոդվածներում դրանց կիրառելիությունը՝ հնարավորություն ընձեռելով իրավակիրառողին ունիվերսալ կերպով մեկնաբանել այդ հասկացությունը, այլ ոչ թե կատարել դա վերապահումներով կամ սահմանափակել այն:

<sup>21</sup> Այն ներկայացված է հոդվածի 5-րդ էջում:

<sup>22</sup> Կիրառվում է ՀՀ քրեական նախկին օրենսգրքի եզրութաբանությունը՝ հաշվի առնելով ՀՀ վճռաբեկ դատարանի վերը նշված նախադեպային որոշումը:

<sup>23</sup> <https://www.arlis.am/documentview.aspx?docID=80785>, կետ 26 (մուտք 13.11.2023 թ.):

**3. Բռնության ընկալումը ՀՀ քրեական նոր օրենսգրքի համատեքստում**

Բռնության լայն և նեղ իմաստով ընկալումը խիստ կարևոր է, և լայն իմաստով սահմանումը պետք է լինի կիրառելի բռնության՝ որպես սոցիալական երևույթի մասին խոսելիս, իսկ բռնությունը նեղ իմաստով վերաբերելի է միայն հանցագործության մասին խոսելիս, այսինքն՝ քրեաիրավական համատեքստում: Այդ հանգամանքով է պայմանավորված, որ ՀՀ վճռաբեկ դատարանը, սահմանելով բռնությունը, ընդգծել է դրա՝ քրեորեն հետապնդելի արարք լինելը: Համանման մոտեցում է որդեգրել նաև ՀՀ քրեական նոր օրենսգիրքը, որը սահմանել է «բռնություն» հասկացությունը 3-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետում, որի համաձայն՝ բռնություն է այլ մարդու նկատմամբ նրա կամքին հակառակ կամ կամքն անտեսելով, դիտավորյալ ֆիզիկական ներգործություն գործադրելը կամ այդ եղանակով նրան ֆիզիկական վնաս պատճառելը: Հարկ է նշել, որ այս սահմանումը կիրառելի է միայն ՀՀ քրեական օրենսգրքի սահմաններում, սակայն համարվում է շատ նեղ սահմանում բռնությունն առհասարակ բնութագրելու համար: Ընդհանրացնելով ՀՀ քրեական նոր օրենսգրքով «բռնություն» հասկացության էությունը՝ հատկանշական է, որ այն բնութագրվում է հետևյալ առանձնահատկություններով՝

- 1) բռնությունը դիտավորյալ և գիտակցված վարքագիծ է,
- 2) բռնությունը կիրառվում է այլ մարդու նկատմամբ,
- 3) բռնությունը կիրառվում է այլ անձի կամքին հակառակ կամ կամքն անտեսելով,
- 4) բռնությունը դրսևորվում է երկու եղանակով. այն կա՛մ ֆիզիկական ներգործություն է, կա՛մ ֆիզիկական ներգործություն գործադրելու եղանակով անձին ֆիզիկական վնաս պատճառելն է:

Անփոփելիվ այս հասկացությունը՝ ակնհայտ է, որ բռնությունն արտահայտվում է բացառապես վերը նշված երկու եղանակով, և այն արտահայտվում է ֆիզիկական, հոգեբանական, սեռական և տնտեսական դրսևորումներով, ինչպես դա ընդունված է տարբեր մասնագիտական գրականությունում:

ՀՀ քրեական նոր օրենսգրքի համատեքստում բռնությունը մեկնաբանելիս առաջին երեք հատկանիշները լրացուցիչ մեկնաբանության կարիք չունեն, քանի որ այն վաղուց հայտնի են թե՛ քրեական իրավունքի տեսությանը և թե՛ պրակտիկային: «Բռնություն» հասկացության նորարարական հատկանիշն է այն ֆիզիկական ներգործություն հանդիսանալը կամ ֆիզիկական ներգործություն գործադրելու եղանակով նրան ֆիզիկական վնաս պատճառելը:

ՀՀ քրեական նոր օրենսգիրքը 195-րդ հոդվածում արդեն իսկ նախատեսել է ֆիզիկական ներգործությունը՝ որպես հանցագործություն: Հետևաբար, նույնական հասկացության կիրառումը պահանջում է դրա միատեսակ մեկնաբանություն:

«Նորմատիվ-իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս

կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:

Փաստացի ՀՀ քրեական նոր օրենսգրքի թե՛ 3-րդ, թե՛ 195-րդ հոդվածներում կիրառվում է «Ֆիզիկական ներգործություն» եզրույթը, հետևաբար անհրաժեշտ է հասկանալ այդ հասկացությունները պետք է մեկնաբանվեն նույնաբովանդակ, թե՛ ոչ:

Այն, որ ՀՀ քրեական նոր օրենսգրքի 195-րդ հոդվածով նախատեսված հանցագործության դեպքում վնաս է պատճառվում անձի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությանը, խախտվում են անձի ինչպես ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքը, այնպես էլ նրա առողջության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները, անվիճելի է, և այդ հոդվածով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմը բնութագրվում է՝

ա) հանցագործությունից տուժածին հարվածներ հասցնելով,

բ) հանցագործությունից տուժածի նկատմամբ այլ բռնի գործողություններ կատարելով:

Ընդ որում, այդ գործողությունները չպետք է հանգեցնեն դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելուն:

Նշված արարքների հետևանքով տուժածի ֆիզիկական վիճակը բացասական փոփոխությունների է ենթարկվում: Ծիշտ է, ՀՀ քրեական նոր օրենսգրքի 195-րդ հոդվածը սահմանում է հարվածներ հասցնելու կամ այնպիսի այլ բռնի գործողություններ կատարելու մասին, որոնք չեն պարունակում դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելու հատկանիշներ, այնուամենայնիվ այն հանդիսանում է մարդու ֆիզիկական կամ հոգեկան անձեռնմխելիության դեմ ուղղված ռոնձգություն, որն օժտված է հանրային վտանգավորության որոշակի բնույթով և աստիճանով:

Հարվածը ֆիզիկական ներգործության տարատեսակ է, որն ուղղված է անձի անատոմիական (ֆիզիկական) անձեռնմխելիությունը խախտելուն, ֆիզիկական ցավ պատճառելուն, սակայն այդ հարվածներն ինքնին չեն առաջացրել անգամ առողջության թեթև վնաս: Փաստացի այս հոդվածը փոխարինել է ՀՀ քրեական նախկին օրենսգրքի 118-րդ հոդվածին:

Հարվածներ հասցնելը բնութագրվում է տուժածի մարմնին հարվածներ հասցնելով, ընդ որում, հարվածները կարող են հասցվել ինչպես ձեռքերով կամ ոտքերով, այնպես էլ բույթ և կոշտ գործիքի գործադրմամբ բազմաթիվ (մեկից ավելի) անգամ: Հարվածներ հասցնելը ոչ թե որպես մեկ, այլ բազմակի (մեկից ավելի) ակտ է: Այլ խոսքով՝ ՀՀ քրեական նոր օրենսգրքի 195-րդ հոդվածով արգելված արարքի բովանդակությունից հետևում է, որ հանցագործությունից տուժածին պետք է բազմաթիվ (մեկից ավելի) հարվածներ հասցվի<sup>24</sup>: Այսինքն՝

<sup>24</sup> Տե՛ս Թումայան Գ. Ա., Հովհաննիսյան Կ. Ա., ՀՀ քրեական իրավունք (Հատուկ մաս). Ուսումնական ձեռնարկ, ՀՀ ոստիկանության կրթահամալիր, Երևան, Լիմուշ, 2022 թ., էջեր 271-272:

ֆիզիկական ներգործությունը երկու և ավելի (մեկից ավելի) հարվածներ հասցնելն է, և մեկ հարվածը չի կարող հանդիսանալ ֆիզիկական ներգործություն:

«Հարված» նշանակում է «ուժգին կերպով ձեռքով, ոտքով որևէ բանի խփելը, որևէ առարկայով կամ գործիքով մեկին կամ մի բանի խփելը, առարկայի ուժգին բախում մեկ այլ առարկային, հրազենի պարպում, զարկ»<sup>25</sup>: Որպես «հարված» բառի հոմանիշներ կիրառվում են բախյունը, բախումը, ապտակը, կռվոցը, կռուփը, ցնցումը և այլն<sup>26</sup>: Այսինքն, եթե մեկնաբանենք ֆիզիկական ներգործությունը հարվածների տեսանկյունից, ապա ֆիզիկական ներգործություն կհանդիսանա երկու և ավելի ապտակը:

Հարվածներ հասցնելը ենթադրում է, որ արարքն ավարտված կհամարվի առնվազն երկու հարվածի առկայության դեպքում, քանի որ կիրառվում է հոգնակի թվով ձևակերպումը: Մեկ հարվածը հնարավոր չէ նաև դիտարկել որպես այլ բռնի գործողություններ, քանի որ օբյեկտիվ կողմից՝ հարված հասցնելը և այլ բռնի գործողություններն իրարից տարբերվում են: Եթե մեկ հարվածն ավելի ուժգին լինի, քան մի քանիսը, և այդ մեկ հարվածն առաջացնի, օրինակ, առողջությանը ծանր, միջին ծանրության կամ թեթև վնաս, ապա արարքը որակվում է ըստ փաստացի վրա հասած հետևանքի<sup>27</sup>:

Հոգնակի և եզակի թվով հասկացությունների կիրառմանն անդրադառնում է «Նորմատիվ-իրավական ակտերի մասին» օրենքը, որի 16-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ եթե նորմատիվ իրավական ակտում բառը նշված է եզակի թվով, ապա դա տարածվում է նաև այդ բառի հոգնակիի վրա և ընդհակառակը, եթե տվյալ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ կամ ուղղակի այլ բան չի բխում այդ իրավական ակտի բովանդակությունից: Ընդհանուր կանոնը, որ եթե բառը նշված է եզակի թվով, ապա դա տարածվում է նաև այդ բառի հոգնակիի վրա և ընդհակառակը, միանշանակ չի վերաբերում ՀՀ քրեական օրենսգրքին, քանի որ՝

1) ՀՀ քրեական օրենսգրքով այլ բան է նախատեսված, և

2) չկիրառելն ուղղակի բխում է ՀՀ քրեական օրենսգրքի բովանդակությունից:

Մասնավորապես, ՀՀ քրեական նոր օրենսգիրքը բովանդակում է արգելող նորմերի ամբողջություն, հետևաբար այդ նորմերը պետք է մեկնաբանվեն տառացի, այլ ոչ թե տարածական: Բացի այդ, ՀՀ քրեական նոր օրենսգրքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեական օրենքի Հատուկ մասի նորմերն

<sup>25</sup> Տե՛ս, Աղայան Է. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1976 թ., էջ 848, [http://www.nayiri.com/imaginedictionarybrowser.jsp?dictionaryId=24&dt=HY\\_HY&pageNumber=865](http://www.nayiri.com/imaginedictionarybrowser.jsp?dictionaryId=24&dt=HY_HY&pageNumber=865) (մուտք 13.11.2013 թ.):

<sup>26</sup> <https://bararanonline.com/%D5%B0%D5%A1%D6%80%D5%BE%D5%A1%D5%AE> (մուտք 13.11.2013թ.):

<sup>27</sup> Տե՛ս Թումասյան Դ. Ա., Հովհաննիսյան Կ. Ա., ՀՀ քրեական իրավունք (Հատուկ մաս), Ոստումնական ձեռնարկ, ՀՀ ոստիկանության կրթահամալիր, Երևան, Լիմուշ, 2022 թ., էջեր 273-274:

անալոգիայով կիրառելն արգելվում է, իսկ 3-րդ մասի համաձայն՝ քրեական օրենքի Ընդհանուր մասի նորմերը կարող են անալոգիայով կիրառվել, եթե դա չի վատթարացնում անձի վիճակը: Այն, որ մեկ հարվածը հանցագործություն համարելը հակասում է ՀՀ քրեական նոր օրենսգրքի 4-րդ հոդվածի 2-րդ մասին, ակնհայտ է, քանի որ ՀՀ քրեական նոր օրենսգրքի 195-րդ հոդվածը զետեղված է ՀՀ քրեական նոր օրենսգրքի Հատուկ մասում և մեկ հարվածը հարվածներ դիտելը նորմի անալոգիայով կիրառում է:

Ընդունելով այն փաստը, որ ֆիզիկական ներգործությունը երկու և ավելի հարվածներ հասցնելն է՝ հետաքրքրական է դառնում «բռնություն» հասկացության մեկնաբանությունը՝ հաշվի առնելով, որ ՀՀ քրեական նոր օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը «բռնությունը» նկարագրում է փոխկապակցելով ֆիզիկական ներգործության հետ՝ այն դիտարկելով կա՛մ ինքնին ֆիզիկական ներգործություն, կա՛մ ֆիզիկական ներգործություն գործադրելու եղանակով անձին ֆիզիկական վնաս պատճառելը: Այս համատեքստում ստացվում է, որ «բռնություն» հասկացությունը մեկնաբանելիս անհրաժեշտ է առնվազն երկու հարված կամ առնվազն երկու հարվածով անձին ֆիզիկական վնաս պատճառել:

Վերը նշված համակարգային վերլուծությունը, որն իրականացվել է «Նորմատիվ-իրավական ակտերի մասին» օրենքի և ՀՀ քրեական նոր օրենսգրքի տառացի մեկնաբանության հիման վրա՝ ելնելով ՀՀ քրեական նոր օրենսգրքում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, անվիճելիորեն առաջացնելու է և առաջացնում է բարդություններ ՀՀ քրեական նոր օրենսգրքի Հատուկ մասի հոդվածները մեկնաբանելիս:

#### **4. «Բռնություն» հասկացության հատկանիշները**

Վերլուծելով վերը նշված «բռնություն» հասկացությունները և տեսական սահմանումները՝ հնարավոր է ներկայացնել բռնության այն հատկանիշները, որոնք բնութագրում են այն որպես քրեաիրավական կատեգորիա և որոնք տառացի կամ որոշակի փոփոխություններով պետք է ներառվեն «բռնություն» հասկացության մեջ: Դրանք են՝

- 1) բռնությունը հարկադրանքի դրսևորման ձև է,
- 2) բռնությունը հանրորեն վտանգավոր է, հակաիրավական, մեղավորությամբ կատարվող՝ առավել կոնկրետ՝ դիտավորյալ արարք,
- 3) բռնությունը կատարվում է ուրիշի կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու,
- 4) բռնության ներգործության առարկան են ուրիշի օրգանիզմը, ֆիզիկական ազատությունը, ուրիշի հոգեկանը, անձեռնմխելիությունը,
- 5) բռնությունն ուղղված է մարդու, այսինքն՝ նրա կյանքի, առողջության, ֆիզիկական ազատության դեմ,

6) բռնությունը կատարվում է ֆիզիկական կամ հոգեկան ուժի գործադրմամբ,

7) բռնությամբ ճնշվում է ուրիշի կամքը, և այն ուղղված է ազատ կամահայտնության դեմ,

8) բռնությունն ընդունակ է ուրիշին հասցնել ֆիզիկական կամ հոգեկան վնաս, ֆիզիկական ցավ կամ հոգեկան տառապանք,

9) բռնությունը գործողություն է, և անգործությամբ բռնություն գործադրելն անհնարին է,

10) բռնությունն ուղղված է ուրիշի ֆիզիկական կամ հոգեկան անձեռնմխելիության, առողջության կամ կյանքի դեմ,

11) բռնությունն առնվազն երկու հարվածն է կամ առնվազն երկու հարվածով անձին ֆիզիկական վնաս պատճառելն է<sup>28</sup>:

ՀՀ քրեական նոր օրենսգրքը որպես արարք, կատարման եղանակ, միջոց, ծանրացնող կամ առավել ծանրացնող հանգամանք նշելիս սահմանափակվում է «բռնություն» և «բռնության սպառնալիք» հասկացությունները կիրառելով՝ չնշելով դրանց բնույթը կամ ծանրության աստիճանը: Սակայն հարկ է նշել, որ որպեսզի վերը նշված հանցագործություններն ու գործողությունները հանդիսանան հանցավոր բռնություն, անհրաժեշտ է, որ դրանց մեջ առկա լինեն «բռնության» բոլոր հատկանիշները, և որ դրանք կատարվեն կոնկրետ հանցագործության կատարման նպատակով և գործադրվեն այն մարդու նկատմամբ, որը հանցագործությունից տուժածն է կամ դրա անմիջական առաջնային կամ երկրորդական օբյեկտ հանդիսացող հասարակական հարաբերության կողմը: Պարտադիր հատկանիշը վերաբերում է նաև «երկու կամ ավելի հարվածներին կամ այդ եղանակով անձին ֆիզիկական վնաս պատճառելուն»:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խառնաշփոթ կարող է առաջանալ ՀՀ քրեական նոր օրենսգրքի Հատուկ մասի հոդվածների մեկնաբանման ժամանակ, որոնք բովանդակում են «բռնությունը» որպես կատարման եղանակ կամ միջոց, ծանրացնող կամ առավել ծանրացնող հանգամանք:

### **5. «Բռնություն» հասկացության կիրառելիությունը ՀՀ քրեական նոր օրենսգրքի Հատուկ մասի հոդվածներում**

ՀՀ քրեական նոր օրենսգրքի Հատուկ մասի 30 հոդվածներում «բռնությունը» ներառված է հասարակ հանցակազմերում՝ որպես օբյեկտիվ կողմի պարտադիր կամ այլընտրանքային արարք կամ կատարման եղանակ կամ միջոց, իսկ 32 հոդվածներում՝ որպես ծանրացնող կամ առավել ծանրացնող հանգամանք: Հետևաբար, այդ բոլոր հոդվածների իմաստով առաջանում է անհրաժեշտություն՝ պարզելու, թե որքանով է ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածում նախա-

<sup>28</sup> Վերջին կետը բացառապես ՀՀ քրեական նոր օրենսգրքի տառացի մեկնաբանության արդյունք է և չի հանդիպել այլ մեկնաբանություններում:

տեսված «բռնություն» հասկացությունը կիրառելի այդ հանցագործությունների առնչությամբ և արդյոք այդ հասկացությունը չի փոխում «բռնության» այն իմաստը, որը ենթադրվում է այդ հանցագործությունների իմաստով:

Այսպես, օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածով ավազակությունը բնորոշվում է որպես բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կատարված հափշտակություն: Այսինքն՝ ավազակության օբյեկտիվ կողմը բնութագրվում է հետևյալ հատկանիշներով՝

- 1) ուրիշի գույքի հափշտակություն,
- 2) բռնության գործադրում կամ դա գործադրելու սպառնալիք:

ՀՀ քրեական նոր օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով սահմանված բռնության համատեքստում ավազակության ուսումնասիրությունից ակնհայտ է, որ օրենսդիրը քննարկվող հոդվածի շրջանակներում արարքի որակման առումով չի կարևորել և չի առանձնացրել, թե կիրառված բռնությունը կյանքի համար վտանգավոր է, թե՛ ոչ, և բոլոր դեպքերում, երբ հանցավորը բռնության կամ դրա սպառնալիքի գործադրմամբ հափշտակություն է կատարում, արարքը պետք է որակվի որպես ավազակություն: Սակայն բռնությունը պետք է դրսևորվի առնվազն երկու հարվածով կամ երկու հարվածով ֆիզիկական վնաս պատճառի, որպեսզի իրավակիրառողը հնարավորություն ունենա արարքը որակի որպես ավազակություն:

Նման մոտեցումը բխում է ՀՀ քրեական նոր օրենսգրքի 3-րդ հոդվածի տառացի մեկնաբանությունից և նման մոտեցումը ոչ միայն ճիշտ չէ, այլ նաև հակասում է այն բովանդակությանը և նպատակին, որը դրվել է ՀՀ քրեական օրենսգրքի հիմքում:

Համանման խնդիր առաջանում է ՀՀ քրեական նոր օրենսգրքի Հատուկ մասի այլ հոդվածների ուսումնասիրության ժամանակ, իսկ որոշ հոդվածները դարձնում մասնակի ոչ կիրառելի, օրինակ՝ ՀՀ քրեական նոր օրենսգրքի 452-րդ հոդվածը, որը պատասխանատվություն է սահմանում պաշտոնատար անձի օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեությանը միջամտելը: Այդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցագործություն է պաշտոնատար անձի օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեությանը միջամտելու նպատակով անձանց որոշակի շրջանակի<sup>29</sup> կատմամբ **բռնություն գործադրելու ... սպառնալիքը**, իսկ 3-րդ մասի համաձայն՝ նույն նպատակով նույն անձանց նկատմամբ **բռնություն գործադրելը**:

Բռնություն եզրույթը մեկնաբանելով ՀՀ քրեական նոր օրենսգրքի 3-րդ հոդվածի լույսի ներքո՝ ստացվում է, որ պաշտոնատար անձին, կապված նրա օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեությանը միջամտելու հետ, նրա մերձավոր ազգականին կամ մերձավորին կամ նշված անձանց

<sup>29</sup> Այդ անձինք են պաշտոնատար անձը, նրա մերձավոր ազգականը, մերձավորը կամ նշված անձանց դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողը:



դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողին մեկ հարվածով սպառնալը կամ մեկ հարված հասցնելը կրկին չի դիտվելու հանցագործություն, ինչն անտրամաբանական է, քանի որ նշված անձանց պաշտպանությունն ունի առաջնայնություն՝ կապված նրանց օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեության հետ: Ավելին, կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունները ռոնձգում են միաբնույթ հասարակական հարաբերությունների դեմ և քննարկվող հանցագործությունների տեսակային օբյեկտն այն հասարակական հարաբերություններն են, որոնք ապահովում են պետության կառավարման առանձին օղակների նորմալ գործունեությունը: Կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունների մեծամասնությունը, ներառյալ՝ ՀՀ քրեական նոր օրենսգրքի 452-րդ հոդվածով նախատեսված արարքը, կարող է ունենալ նաև լրացուցիչ օբյեկտ՝ մարդու սեփականությունը, առողջությունը, ֆիզիկական անձեռնմխելիությունը, իրավունքները կամ ազատությունները պաշտպանող հասարակական հարաբերությունները: Հետևաբար, այս հանցագործության առնչությամբ էլ «բռնություն» հասկացությունը կիրառելի չէ այն իմաստով, որ չի կարող ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի խնդիրներն ու նպատակները, և անտեսվում է հիմնական անմիջական օբյեկտը:

Համանման իրավիճակ է ձևավորվում ՀՀ քրեական նոր օրենսգրքի Հատուկ մասի ցանկացած հոդվածի մեկնաբանման դեպքում, որը բովանդակում է «բռնություն» հասկացությունը որպես հանցագործության արարք, կատարման եղանակ, միջոց, ծանրացնող կամ առավել ծանրացնող հանգամանք, հետևաբար անհրաժեշտություն է առաջանում «բռնություն» հասկացությունը ներկայացնել այլ՝ առավել ունիվերսալ տարբերակով, որում կներառվի նաև մեկ հարվածը կամ այլ բռնի դրսևորումները, որոնք ֆիզիկական ներգործություն չեն համարվում:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է «բռնություն» հասկացությունը ձևավորելու համար կիրառել ինչպես ՀՀ քրեական նոր օրենսգրքի 3-րդ հոդվածով, այնպես էլ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից տրված, ինչպես նաև տեսության մեջ ամրագրված «բռնություն» հասկացությունների տարբեր հատկանիշների համակցությամբ ձևավորած նոր եզրույթ: Օրինակ՝

Տարբերակ 1 - Բռնությունն այլ մարդու նկատմամբ նրա կամքին հակառակ կամ կամքն անտեսելով՝ դիտավորյալ **ցանկացած** ներգործություն գործադրելն է կամ այդ եղանակով նրան վնաս պատճառելը:

Տարբերակ 2 - Բռնությունն այլ մարդու նկատմամբ նրա կամքին հակառակ կամ կամքն անտեսելով՝ դիտավորյալ ցանկացած ներգործություն **գործադրելն** է կամ այդ եղանակով նրան **ցավ, տառապանք** կամ **վնաս պատճառելն** է:

Տարբերակ 3 - Բռնությունն այլ մարդու **անատոմիական ամբողջականության վրա** մարդու կամքին հակառակ կամ կամքն անտեսելով՝ դիտավորյալ **ազդեցություն** գործադրելը կամ այդ եղանակով նրան ֆիզիկական վնաս պատճառելն է:

Տարբերակ 4 - Բռնությունն այլ մարդու **անատոմիական ամբողջականության վրա** մարդու կամքին հակառակ կամ կամքն անտեսելով՝ դիտավորյալ **ազդեցություն** գործադրելը կամ այդ եղանակով նրան ֆիզիկական **ցավ** կամ **վնաս** պատճառելն է:

Տարբերակ 5 - Բռնությունն այլ մարդու նկատմամբ նրա կամքին հակառակ կամ կամքն անտեսելով՝ դիտավորյալ **ցանկացած արարք կատարելն է, որը խախտում է մարդու անատոմիական ամբողջականությունը** կամ այդ եղանակով նրան ֆիզիկական **ցավ** կամ **վնաս** պատճառելն է:

Տարբերակ 6 - Բռնությունն այլ մարդու նկատմամբ նրա կամքին հակառակ կամ կամքն անտեսելով՝ դիտավորյալ **ցանկացած արարք կատարելն է, որը խախտում է մարդու ֆիզիկական անձեռնմխելիությունը**, կամ այդ եղանակով նրան ֆիզիկական **ցավ** կամ **բացասական** և այլ **վնաս** պատճառելն է:

Տարբերակ 7 - Բռնությունն այլ մարդու նկատմամբ նրա կամքին հակառակ կամ կամքն անտեսելով՝ **դիտավորյալ ցանկացած արարք կատարելն է, որը խախտում է մարդու ֆիզիկական անձեռնմխելիությունը**, կամ այդ եղանակով նրան ֆիզիկական **ցավ, տառապանք** կամ այլ **վնաս** պատճառելն է:

Վերը նշված «բռնություն» հասկացության տարբերակները ոչ միայն առավել ամբողջական են ներկայացնում «բռնություն»-ը որպես տարբեր հանցագործությունների արարք, կատարման եղանակ, միջոց, ծանրացնող կամ առավել ծանրացնող հանգամանք, այլ նաև չեն փոխկապակցում այն ֆիզիկական ներգործության հետ, ինչը հնարավորություն է տալիս տարանջատել բռնության քրեորեն պատժելի և ոչ պատժելի դրսևորումները:

### **Եզրակացություն**

Ամփոփելով կատարված ուսումնասիրությունը՝ հնարավոր է սպառնալից պատասխանել ուսումնասիրվող հիմնական հարցերին: Մասնավորապես՝

1. ՀՀ վճարելի դատարանի դիրքորոշումը ՀՀ քրեական նոր օրենսգրքով սահմանված հասկացությունների շրջանակներում կիրառելի չէ և ոչ միայն այն պատճառով, որ ՀՀ քրեական նոր օրենսգրքի 3-րդ հոդվածում տրված է «բռնություն» հասկացությունը, այլ նաև այն պատճառով, որ այն բնութագրում է ինքնուրույն հանցակազմ հանդիսացող բռնությունը, և բովանդակում է այնպիսի հատկանիշներ, որոնք դուրս են ոչ հանցավոր «բռնություն» հասկացությունից, և հակառակը՝ չի նախատեսում հատկանիշներ, որոնք պետք է նախատեսվեն:
2. ՀՀ քրեական նոր օրենսգրքով սահմանված «բռնություն» հասկացությունը կիրառելի չէ ՀՀ քրեական նոր օրենսգրքի Հատուկ մասի հոդվածների համատեքստում, քանի որ փոխկապակցելով բռնությունը ֆիզիկական ներգործության կամ այդ եղանակով ֆիզիկական վնաս պատճառելու հետ՝ դարձնում է հանցագործությունների մեկնաբանու-

թյունն անհնարին կամ դժվարացած: Եվ գործնականում հնարավոր չէ պատկերացնել, որ մեկ հարվածով հնարավոր չէ կատարել պաշտոնատար անձի օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեությանը միջամտելը, մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը, ավագակությունը կամ բռնությամբ կատարվող այլ հանցագործություններ, այն դեպքում, երբ օրենսդրորեն դա հնարավոր չէ:

3. Վերը նշված երկու եզրահանգումների հիման վրա ակնհայտ է, որ «բռնություն» հասկացությունն անհրաժեշտ է փոփոխել: Մույն ուսումնասիրության նախորդ բաժնում ներկայացված հասկացությունների հնարավոր տարբերակներից առավել համապարփակ «բռնություն» հասկացությունը ներկայացված է 7-րդ տարբերակում, որի համաձայն՝ բռնություն է այլ մարդու նկատմամբ նրա կամքին հակառակ կամ կամքն անտեսելով՝ դիտավորյալ ցանկացած արարք կատարելը, որը խախտում է մարդու ֆիզիկական անձեռնմխելիությունը, կամ այդ եղանակով նրան ֆիզիկական ցավ, տառապանք կամ այլ վնաս պատճառելը: Նման ձևակերպումն էլ հնարավորություն կընձեռնի առավել ամբողջականացված ներկայացնել «բռնություն» հասկացությունը և այն կիրառել ՀՀ քրեական նոր օրենսգրքի Հատուկ մասի տարբեր հոդվածների համատեքստում:

**Գրականության ցանկ (reference list, список литературы)**

Իրավական և դատական ակտեր

1. ՀՀ քրեական նոր օրենսգիրք՝ ընդունված 05.05.2021 թ.-ին, ուժի մեջ մտած 01.07.2022 թ.-ից, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=185735> (մուտք 13.12.2022 թ.):  
Criminal Code of the Republic of Armenia, adopted on 05.05.2021, entered into force since 01.07.2022, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=185735> (access 13.12.2022)
2. ՀՀ քրեական նախկին օրենսգիրք՝ ընդունված 18.04.2003 թ.-ին, ուժի մեջ մտած 01.08.2003 թ.-ից, ուժը կորցրած 01.07.2022 թ.-ին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=113216> (մուտք 13.12.2022 թ.):  
Criminal Code of the Republic of Armenia, adopted on 18.04.2003, entered into force since 01.08.2003, expired on 01.07.2022, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=113216> (access 13.12.2022)
3. «Նորմատիվ-իրավական ակտերի մասին» օրենք՝ ընդունված 21.03.2018 թ., ուժի մեջ մտած 07.04.2018 թ.-ից, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=175854> (մուտք 13.12.2022 թ.):  
Law “On Normative-Legal Acts”, adopted on 21.03.2018, entered into force on 07.04.2018, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=175854> (access 13.12.2022)
4. ՀՀ վճռաբեկ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 1-ի Ա. և Ծ. Սահակյանների վերաբերյալ թիվ ԱԲԴ/0176/01/11 քրեական գործով որոշում, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=80785> (մուտք 13.11.2022 թ.):  
Decision of the RA Court of Cassation of November 1, 2012 regarding the A. and T. Sahakyans in the criminal case No. ԱԲԴ/0176/01/11, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=80785> (access 13.11.2022)
5. «Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» օրենքի նախագիծ, <https://www.e-draft.am/projects/5592/about> (մուտք 13.11.2022 թ.)  
Draft Law “On Child Rights and Child Protection System”, <https://www.e-draft.am/projects/5592/about> (access 13.11.2022)

Մասնագիտական գրականություն

6. Առաքելյան Ս. Վ., Կանանց իրավական պաշտպանությունը բռնությունից, Երևան, 2001 թ., էջ 8:  
Arakelyan S.V. Legal protection of women from violence. Yerevan, 2001, p. 8.
7. Աղայան Է. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1976 թ., էջ 848,

[http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=24&dt=HY\\_HY&pageNumber=865](http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=24&dt=HY_HY&pageNumber=865) (մուտք 13.11.2022 թ.):

Aghayan E.B. Explanatory dictionary of modern Armenian. Yerevan, Hayastan Publishing House, 1976, p. 848, [http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=24&dt=HY\\_HY&pageNumber=865](http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=24&dt=HY_HY&pageNumber=865) (access 13.11.2022).

8. Թումասյան Դ. Ա., Հովհաննիսյան Կ. Ա., ՀՀ քրեական իրավունք (Հասուն կ մաս), Ոստիկանական ձեռնարկ, ՀՀ ոստիկանության կրթահամալիր, Երևան, Լիմուշ, 2022 թ., էջեր 271-274:  
Tumasyan D. A., Hovhannisyanyan K. A., RA criminal law (Special part). Educational manual. RA Police Educational Complex. Yerevan, Limush, 2022, pp. 271-274.
9. Հունանյան Դ. Ռ., Բռնությունը քրեական իրավունքի մեջ, Իրավ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2010 թ., էջեր 37, 177:  
Hunanyan D. R., Violence in the criminal law. Dissertation for PhD. Yerevan, 2010, p. 37, 177.
10. Базаров Р. А., Уголовно-правовая характеристика насилия// Проблемы обеспечения личной безопасности граждан: Труды Академии МВД России. М., 1995, с. 42-43:  
Bazarov R. A., Criminal-legal characteristics of violence// Problems of ensuring the personal safety of citizens: Proceedings of the Academy of the Ministry of Internal Affairs of Russia. М., 1995, pp. 42-43:
11. Гаухман Л. Д., Борьба с насильственными посягательствами. М., Юридическая литература, 1969, с. 4:  
Gaukhman L. D., Combating violent attacks. М., Legal literature, 1969, p. 4.
12. Джавадов Ф. М., Квалификация насильственных преступлений, совершенных с применением оружия: Автореферат дис. канд юрид. наук. М., 1985, с. 11:  
Javadov F.M. Qualification of violent crimes committed with the use of weapons: Abstract of Dissertation for PhD. М., 1985, p. 11:
13. Землюков С. В., Уголовно-правовые проблемы преступного вреда. Новосибирск, 1991, с. 125:  
Zemlyukov S. V., Criminal legal problems of criminal harm. Novosibirsk, 1991, p. 125.
14. Иванова В. В., Преступное насилие. Учебное пособие для вузов. М.: ЮИ МВД РФ, Книжный мир, 2002, с. 22:  
Ivanova V. V., Criminal violence. Textbook for universities. М.: YI Ministry of Internal Affairs of the Russian Federation, Book World, 2002, p. 22.
15. Иванцова Н. В., Объективные признаки уголовно наказуемого насилия// Сборник научных трудов. М., 2001, N2, с. 96:

- Ivantsova N. V., Objective signs of criminal violence// Collection of scientific works. M., 2001, N2, p. 96.
16. Пионтковский А. А., Преступления против личности. М., 1938, с. 161:  
Piontkovsky A. A., Crimes against the person. M., 1938, p. 161.
  17. Сабиров Р. Д., Уголовно-правовая борьба с насильственными посягательствами. Свердловск, 1981, с. 27, 29, 38:  
Sabirov R. D., Criminal-legal fight against violent attacks. Sverdlovsk, 1981, pp. 27, 29, 38.
  18. Сердюк Л. В., Психическое насилие как предмет уголовно-правовой оценки. Диссертация на соискание канд. юрид. наук. М., 1979, с. 2:  
Serdyuk L. V., Psychological violence as a subject of criminal legal assessment. Dissertation for PhD. M., 1979, p. 2.
  19. Старков О. В., Бытовые насильственные преступления (причинность, групповая профилактика, наказание). Рязань, 1992, с. 34:  
Starkov O. V., Domestic violent crimes (causality, group prevention, punishment). Ryazan, 1992, p. 34.
  20. Тевлюкова О. Ю., Насилие как феномен социальной организации: опыт теоретико-методологического анализа. Диссертация на соискание канд. социолог. наук. Новосибирск, 2005, с. 13:  
Tevlyukova O. Yu., Violence as a phenomenon of social organization: experience of theoretical and methodological analysis. Dissertation for PhD. Novosibirsk, 2005, p. 13.
  21. World report on violence and health/ Edited by Etienne G. Krug, WHO, 2002, p. 5-6, <http://whqlibdoc.who.int/hq/2002/9241545615.pdf> (access 13.11.2022).

**Davit Tumasyan**

*Ph.D. in Law, Associate Professor, Lecturer at the Department of Criminal Law and Criminology of the Educational Complex of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia, Lecturer at the Academy of Justice of the Republic of Armenia*

## **VIOLENCE UNDER THE REGULATION OF THE NEW CRIMINAL CODE OF THE REPUBLIC OF ARMENIA<sup>1</sup>**

### **Abstract**

Considering that the definition “violence” received a new interpretation in the new RA Criminal Code which entered into force on July 1, 2022, it became necessary to consider the content of this definition and the possibility of its application within the framework of the Articles of the Special Part of the RA Criminal Code. This issue has become more relevant due to the differences in the interpretation of the definition “violence” enshrined in Article 3 of the RA Criminal Code, and the term previously given by the RA Court of Cassation on November 1, 2012 in the criminal case ԱՐԴ/0176/01/11 in relation to Arevik and Tsovinar Sahakyan: especially since practice not only accepted the position of the indicated RA Court of Cassation and widely applied it. As a result of the comprehensive analysis carried out in this context, implementing the goals of this study the recommendations of both a legislative and practice were presented. It is undeniable that intentional physical influence on another person against his/her will or regardless his/her will, or causing him/her physical harm in this way is considered violence, however, this definition doesn’t completely solve the issues posed by the RA Criminal Code, and doesn’t satisfy the requirements of certain Articles of the Special Part of the RA Criminal Code. Consequently, on the basis of the presented recommendations, it will be possible not only to clarify the existing confusion that arises between the analyzed definitions, but also, by applying the presented interpretations in practice, to form a judicial-investigative practice that will comply with legislative norms and is based on the principles of law.

The article examines the problem of the definition “violence” of practical and theoretical significance, based on which the article can be useful to both theorists and practitioners. The presented comments can be effective for formulating further decisions of the RA Court of Cassation, as well as for the specialists carrying out legislative activities.

**Keywords:** violence; physical influence; physical violence; threat of violence; blows; beating; physical harm.

---

<sup>1</sup> The article was presented on 13.12.2023 and was reviewed on 02.04.2024.

**Давид Тумасян**

*к.ю.н., доцент, преподаватель кафедры уголовного права и криминологии Учебного комплекса МВД Республики Армения, преподаватель Академии юстиции Республики Армения*

## **НАСИЛИЕ В СВЕТЕ ПОЛОЖЕНИЙ НОВОГО УГОЛОВНОГО КОДЕКСА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ<sup>1</sup>**

### **Абстракт**

Учитывая, что термин “насилие” получил новое толкование в свете нового Уголовного кодекса РА, вступившего в силу с 1 июля 2022 года, возникла необходимость рассмотреть содержание этого понятия и возможность его применения в рамках статей Особенной части Уголовного кодекса РА. Этот вопрос стал более актуальным в связи с различиями формулировок и толкованием понятия “насилие”, закрепленного в статье 3 Уголовного кодекса РА, и формулировкой, данной ранее Кассационным судом РА - от 1 ноября 2012 года по уголовному делу ЦРԴ/0176/01/11 в отношении Аревик и Цовинар Саакян: тем более, что правоприменительная практика не только приняла позицию, указанную Кассационным судом РА, но и широко применяла данное понятие. В результате проведенного в данном контексте комплексного анализа, осуществляя цели данного исследования, были представлены рекомендации как законодательного, так и практического характера. Бесспорно, что умышленное физическое воздействие в отношении другого человека против его воли, либо помимо его воли, либо причинение ему физического вреда таким способом считается насилием, однако, данная формулировка не полностью решает задачи, поставленные Уголовным кодексом РА, и не удовлетворяет требования отдельных статей Особенной части Уголовного кодекса РА. Следовательно, на основе представленных рекомендаций можно будет не только внести ясность в существующую путаницу, возникшую относительно анализируемых понятий, но и, применяя представленные толкования на практике, сформировать судебно-следственную практику, которая будет соответствовать законодательным нормам и исходить из принципов права.

В статье рассматривается проблема практического и теоретического значения, исходя из чего статья может быть полезна как для теоретиков, так и для практиков. Представленные комментарии к понятию “насилие” могут быть эффективны для формирования дальнейших решений Кассационного суда РА, а также для специалистов, осуществляющих законотворческую деятельность.

**Ключевые слова:** насилие; физическое воздействие; физическое насилие; угроза насилия; удары; избиение; физический вред.

<sup>1</sup> Статья была представлена 13.12.2023 и прошла рецензирование 02.04.2024.